

յութարանը շուր ատն ունի իր տնամերձ-սծուզը, ուր անենցում էին տան անհրաժեշտ գարնանաշինքն ինն ձմեռային կանաչեղենը (սոխ, սխտոր ու անդայան արոս)։

Արաբը հերկում էին արորով։ Գլխավոր փոխադրամիջոցները երկանիվ սալներն ու կողախներն էին։ Որպես լծկան անասուն օգտագործում էին եզները։ Գոմեջ յահողները սակավաթիվ էին։

### ՀԱՄԵՆԱՀԱՅԵՐԸ ԹՈՒՐԻՒԱՅԻ ԱՅԼ ՎԱՅՐԵՐՈՒՄ

Սասունի (ձանկի) գավառում և Օրդու գավառակում հաստատված համշենահայերը տարբեր ժամանակաշրջաններում աստիճանաբար գաղթել էին Թուրքիայի նաև այլ երկրամասերը։ Ղևպի հարավ՝ Սեբաստիայի նահանգ ու դեպի արեմուտք՝ Սինոպի գավառը (Քասթեմանի նահանգ), սիկեմեդիայի նահանգը և այլուր։

Սինոպի գավառ։ Սինոպ քաղաք—Սև ծովի հարավային ափին հողակված հինավուրց քաղաքնավահանպիսո, որը, Օվսեբիտի վկայությամբ, հիմնադրվել է մ. թ. ա. 625 թ.։

Եղեռնից վերապրած սինոպցիների վկայությամբ, եղեռնի նախօրյակին Սինոպում բնակվում էր շուրջ 30—35 տուն հայ, որոնք հիմնականում գաղթել էին Մավթիայից, Ամասիայից և զբաղվում էին առևտրով ու արհեստներով։ Նրանցից շատերը մեծահարուսաներ էին։

Քաղաքում հայկական դպրոց ու եկեղեցի չիլնելու պատճառով, սինոպցիները հաճախում էին լաղաբաններ Ֆայլուն գյուղի գաղթոցն ու եկեղեցիները<sup>63</sup>։

Սինոպի գավառի ճակակաճ գյուղերը։ Այթուն-օլլին կամ Տերային-գեղը գանվում է Սինոպից մեկ ժամ հարավ-արևմուտք, հարթ ու ռերբոտառ է այլուրում։ Գյուղում բնակվող շուրջ 80 տուն համշենահայերի նախնիները գաղթել էին Չարշամուպի Կուրշումլի (Նուրշումլի) գյուղից։ Նախքան հայերի այսանդ աեղափոխվելը, գյուղը պատկանել է Ալթուն-օլլի կողմած հույն կալվածատերերի, որի պատճառով էլ բնակավայրն ըստացել էր այս անունը։ Ըստ սովանդության, ալթունօլլիները զբաղվելիս են եղել կեղծ սակեղրամաներ զրոշմելով։ Զգալով, որ գեղծարարությունը կարող է հայտնաբերվել, նրանք կալվածները ծախել են հայերին ու հեռացել։ Ավանդությունը հավաստում է նաև, որ գյուղի առաջին հայ բնակիչները եղել են Քյահյան աղջանոճով եղբայրները, որոնցից մեկը քահանա (աերաեր)

Բնակչության մեծամասնությունը հեծկան ձիերի տեր էր. անհրաժեշտության պարագայում ձին օգտագործում էին նաև որպես բեռնակիր անասուն։

Ինչպես ողջ գավառակի գյուղերում, այսանդ նույնպես բոլոր բնակիչի և օժանդակ շենքերը, եկեղեցիներն ու գաղթոցները փայտաշեն էին։

է եղել, այդ պատճառով հայերը գյուղը կոչում էին Տերային կամ Տերաբերին-գեղը։

Բնակիչները կենցաղով, նիստուկացով և բարբարոտով մնացել էին գրեթե նույնը, ինչպիսիք իրենց նախնիներն էին՝ նույնպիսի աներ ու երկրագործական գործիքներ, նույն սովանդական սովորությունները։

Գյուղն ունի գեղեցիկ դիրք. աները զուգահեռ շարված էին ճանապարհի երկու եզրին։ Բնակչության մեջ գերակշռող գերդաստաններն էին՝ Քյահյեցիք (Քյահյան), Լաթումցիք, Ցպիեցիք, Մելիթցիք, Ճվալցիք, Դեմիրցիք, Գյուլլիցիք, Օրգուցիք (հավանական է Օրգուից գաղթածներ)։ Բոլորն էլ ունեին սեփական հողամասեր։ Գլխավոր ու շահութաբեր զբաղմունքը ծխախոտագործությունն էր։ Բոլոր տնտեսությունները զբաղվում էին նաև անասնապահությամբ, զաշամշակությամբ (լաղուտ, ցորեն, գարի), բանջարաբուծությամբ, հավաբուծությամբ։

Վերջին արիներին արաբովել էր նաև կաղնու այգիների (կաղնուա) մշակությունը։ Պաղատու ծառերից մշակում էին նաև աանծ, խնձոր ու սալոր։

Գայլուն կամ Քոչին-Արթիկի գեղ<sup>64</sup>։ Տերային-գեղին արեևելից հարեան այս գյուղում ապրում էր 100 անից ավելի համշենահայ։

Ինչպես Տերային-գեղը, այնպես էլ Գայլուն գյուղը հիմնվել էին միաժամանակ, որոնց բնակիչները համատեղ ուժերով կառուցել էին փայտաշեն եկեղեցի ու գաղթոց, որոնք գտնվում էին Գայլուն գյուղում։

Այս գյուղում ապրող գերդաստանների մեծամասնությունը կրում էին նույն աղջանունները, ինչ Տերային-գեղում։ Երկու գյուղերի անասնական կյանքն ու զբաղմունքները ես նույնն էին։ Այլա։ Գայլունից հորավ-արեևելք ընկած այս գյուղում բնակվում էին 30 տուն համշենահայեր։ Մշակութային կյանքով (գաղթոց, եկեղեցի) նրանք սերտորեն կապված էին Գայլուն գյուղի հետ։

<sup>63</sup> Մ. Բոշկյան, նշվ. աշխ., էջ 43—45։ Մ. Բոշկյանը, ըստ կրեուլիների, նկատի ունի քաղաքամերձ Գայլուն հայկական գյուղի եկեղեցին, որ հաճախում էին Սինոպի հայերը։

<sup>64</sup> Գ. Մովսեճյանցը այս և մոտակա գյուղերը նույնու լ անվանում է Տե՛ս «Թորոս աղբար», էջ 70։

Ալի-բեկ: Սինոպից 5, Լալայից 1 ժամ հարավ ղտնվող այս գյուղում բնակվում էր մոտ 100 տուն նստակյաց հայ գնչու (բռշա):

Այս կողմերում թուրքերն ու հայերը նրանց անվանում էին նաև էլեֆնի (թուրք. մաղագործ): Հայ գնչուները կամ բռշաները ունեին կապույտ աչքեր, շիկահեր էին, բարեկազմ ու գեղեցկազն: Բռշաները խոսում էին իրենց յուրահատուկ բարբառով, որը խրատ տարբերվում էր համշենահայ բարբառից:

Գյուղում կար հայկական դպրոց և եկեղեցի: Մաբալ-աաղ: Ալի-բեկից հարավ ընկած այս գյուղում նույնպես բնակվում էր 100 տնից ավելի նստակյաց բռշա:

Մաբալ. նախորդ գյուղից մեկ ժամ հարավ, այստեղ բնակվում էր 25 տուն համշենահայ:

Կոյլ-տաղի (բոսո ոմանց՝ Գյուլ-տաղի): Գրտնըվում է Սինոպից 8, Սարբուլից շուրջ երկու ժամ հեռու, գեղեցկանիստ, խիստ առողջարար կլիմայով և զուլալ ջրերով հարուստ սարահարթում: Գյուղում բնակվում էր 80—90 տուն համշենահայ, ունեին դպրոց ու եկեղեցի: Ձեռնարկել էին նոր եկեղեցու կառուցմանը, երբ վրա հասավ եղեռնը: Սա Սինոպի շրջանի ամենահեռավոր հայարնակ գյուղն էր:

Ամոսանը քաղաքից շատերը դալիս էին Կոյլ-տաղի հանգստանալու:

Բնակչության գլխավոր զբաղմունքը անասնապահությունն ու կաթնամշակությունն էր, մասամբ էլ՝ մեղվաբուծությունը: Կային մեծաքանակ (30—40 գլուխ) կով ունեցողներ: Առանձին տընտեսություններ պահում էին 400—500 գլուխ և ավելի ոչխար: Շատերը հեծկան ձիեր ունեին: Գյուղն ուներ փայտաշեն տարրակտն դպրոց:

Ջիեկյանլար-խաեե: Սինոպ քաղաքից կես ժամ արեմուտք, ծովափնյա այս գյուղում բնակվում էր 40 տուն հայ նստակյաց բռշա:

Գաբաջա-ֆեսե: Սինոպից 2,5 ժամ արեմուտք գտնվող ծովափնյա այս գյուղում բնակվում էր շուրջ 30 տուն համշենահայ:

Գավառում հիմնված փոքրաթիվ հայ գյուղերն ամբողջությամբ շրջապատված էին թուրքերի, լազերի, աջարացիների (վրացի մահմեդականների) ու փոքրաթիվ հունական գյուղերով:

Սերասախայի ճահաեգ: Այս նահանգի Նիկոսար գավառի Մելեթի գտվառակը սահմանակից է Օրդուի շրջանին: Օրդու քաղաքից մինչև Մելեթ շուրջ 20—22 ժամվա ճանապարհ է:

Օրդու գավառակում հանգրվանած համշենահայերից զգալի թվով ընամանիքներ անցնում են Մելեթի դավառակն ու հիմնվում սահմանակից Կեյզեմի վիճակի Մահմադի գյուղախմբում:

Այս շրջանի համշենահայերը բնակվում էին մեզ հայտնի հետեյալ գյուղերում.

Մահմաղ: Զուտ հայարնակ գյուղ, սփռված բարձր սարահարթերում ու լեռնալանջերին: Օրդուի հեռավոր Բաշ-չարտաղ գյուղից մինչև Մահմաղ ընդամենը 4—5 ժամվա ճանապարհ է: Այս գյուղերը միմյանց հետ հարատև դրացիական ու ազգակցական կապերի մեջ են եղել:

Մահմաղում բնակվում էր շուրջ 120 համշենահայ՝ մեծ մասը վարձակալ գյուղացիներ (Սահակցիք, Վեղիրցիք, Պարսամցիք, Աթակցիք, Թեքեցիք, Քյոսեցիք, Թոփալցիք և այլն):

Բնակչության հիմնական զբաղմունքներն էին անասնապահությունը, կաթնամշակությունը, դաշտամշակությունն (լաղուտ, ցորեն, գարի, հաճար, վարսակ) ու բանջարաբուծությունը: Կայնորեն զարգացած էր մեղվաբուծությունը: Կային 100—200 մեղվափեթակ ունեցողներ:

Խոշոր եղջերավոր անասուններից պահում էին կով ու գոմեջ. քիչ քանակությամբ պահում էին նաև այծ ու ոչխար:

Արագորեն զարգանում էր կաղիկի մշակությունը: Կանեփ մշակում էին բոլոր ընտանիքները՝ սեփական կարիքների համար:

Նրկրագործական հիմնական գործիքները արորն ու փետատն էին: Լեխտր չէին օգտագործում:

Բեռ փոխադրելու ու հեծնելու համար պահում էին ձի և ջորի:

Մահմաղ գյուղը մոտակա բոլոր հայ գյուղերի մշակութային կենտրոնն էր: Այստեղ էին հիմնըվել քարաշեն դպրոցն ու եկեղեցին: Գյուղն ուներ 8-ամյա դպրոց, որտեղ 4-րդ—5-րդ դասարաններից սովորեցնում էին նաև ֆրանսերեն ու թուրքերեն:

Սղջիկ երեխաները այստեղ էլ ուսումից ղրկված էին:

Քյոյլի-ֆյոյ: Մահմաղ գյուղին հտրավից հարեան հայարնակ այս գյուղն ուներ 40 տուն բնակչություն:

Քելլեք: Քյոյլի-քյոյին հարավ-արեմուտքից սահմանակից Քելլեք գյուղում բնակվում էր շուրջ 50 տուն համշենահայ: Ունեին տարրական դպրոց:

Գաբիջա: Համշենահայ այս գյուղը գտնվում էր Մահմաղից մեկ ժամ հարավ-արեմուտք: Ուներ 40 տուն բնակչություն: Գյուղում կար քառամյա դպրոց:

Տեքե-բաշի: Գարիջույին հտրավից սահմանակից գյուղ, որտեղ բնակվում էր ավելի քան 25 տուն հայ:

Լոքսուղ: Տեքե-բաշիից հարավ-արեմուտք, հարեան պուղ, որտեղ բնակվում էր 35 տուն համ-

շենհաճալ: Բորսուղը Մահմադ գյուղախարի ամենահսկառու գյուղն էր. առողջարար կլիսայով ու սառնորակ ջրերով:

Վերոհիշյալ՝ Քյուլի-բլույ, Քեյլեր, Տերե-րաշի, Բորսուղ գյուղերում տարածված էին գյուղատնտեսական նույն դրաղմուսներն ու երկրագործական գործիքները, ինչ Մահմադ գյուղում:

Հելյեղ (Հեթը) գավառակ: Անբասախ նահանգի Թքատ գավառի Հելյեղ գավառակը հյուսիսից սահմանակից է Ունիեի, Բերմեի, Չարշամ-ույսլի շրջաններին, Հիշյալ շրջաններում ու մասամբ Օրգուի գավառակում բնակվող հասշենահայերի պատկանելի սի հասված, դաղթելով Թքատի երկրամասը, հաստատվում է Տրապիզոնի նահանգին սահմանամերձ Հելյեղ գավառակում: Հելյեղից մինչև Սամսոն պետական խճուղով շուրջ երկօրյա ճանապարհ է, այգբան է նաև լեռնային արահտներով մինչև Թերմե, Չարշամյա: Հելյեղից Նիկսար 10 ժամ է:

Հելյեղ գավառակի համշենահայ բնակչություն սննցող գյուղերն էին.

Հայաթ-կիլիզի (Այաթի) Վիհակ: Եաֆառ-չալ կամ Եահիե-կայապի: Գյուղն ուներ շուրջ 150 տուն հայ բնակչություն, որոնց մեծամասնությունը վարձակալ գյուղացիներ էին: Գյուղն ընկած է առողջարար կլիմայով ու սառնորակ ջրերով սարահարթերում: Դաշտավայրերը սեահողային, բերքատատ ու հեշտ մշակելի էին:

Օաքարչացիները ունեին 7-ամյա բարեկարգ դպրոց, բացի մայրենի լեզվից, դասավանդվում էին նաև ֆրանսերեն ու թուրքերեն: Աղջիկները զպրոց չէին հաճախում: Գյուղն ուներ փայտաշեն բարեկարգ եկեղեցի:

Էվալս: Գտնվում է Եաքար-չալից շուրջ երկու ժամվա ճանապարհ հարավ-արեմուտք: Այստեղ բնակվող 140 տուն հայերը, չնչին բացառությամբ, սեփական հողամասեր ունեին:

Գյուղն ուներ բարեկարգ 6-ամյա դպրոց և եկեղեցի:

Եաքար-չալում ու Էվալսում դրաղվում էին դյուղատնտեսության այն ճյուղերով, ինչ որ Մահմադ գյուղում:

Ձևյաի վիհակ: Չուլու: Այս գյուղը գտնվում է Եաքար-չալից շուրջ 4 ժամվա ճանապարհ դեպի արևմուտք: Գյուղում բնակվում էր մոտ 120 տուն վարձակալ ու սեփականատեր համշենահայ, ունեին զպրոց ու եկեղեցի: Չուլուի թաղերն էին Չուլու-Տարտիլուղը և Գասումցոց-գեղը:

Աարի-կայա: Չուլուից մոտ մեկ ժամ հյուսիս-արևմուտք, Վիհակի ամենաբազմամարդ հայաբնակ այս գյուղն ուներ 150 տնից ավելի բը-

նակչություն: Գյուղում կար եկեղեցի և բարեկարգ 6-ամյա ուսումնարան:

Կերեսի: Հայկական այս գյուղը գտնվում էր Չուլուից մոտ երեք ժամ հարավ-արեմուտք, որի շուրջ 130 աան մեծամասնությունը սեփական հողամաս ուներ: Գյուղում կար դպրոց և եկեղեցի: Այս վիհակի գյուղերում նույնպես աղջիկները զպրոց չէին հաճախում:

Ջիրբալ: Գյուղն ուներ 60 տուն համշենահայ բնակչություն: Ապրոնցի, Քյուլլի, Մաթուցի, Քասիմցի, Քյահյանցի, Բերեզցի և այլ դեղաստանները: Գյուղի ս. Կարապետ եկեղեցին հիմնվել է 1885 թ.<sup>65</sup> Ունեին 6-ամյա դպրոց:

Աղաբալ (Աղալաղի): Չուլու համշենահայ այս գյուղն ուներ 50 տուն բնակչություն՝ Քեյլերցի, Լոբյանցի, Տրըշ-օլլի, Թերեզցի, Դեմիրլուցի, Մաաուրցի, Մինասցի և այլ դեղաստաններից:

Գյուղի ս. Կարապետ եկեղեցին հիմնվել է 1859 թ.: Ունեին արարական վարժարան:

Սյուլուֆ-կյուլ: Չուլուից մոտ, ուներ 20 տուն համշենահայ բնակչություն:

Նիկոմեյիայի նահանգ: Պատական Նիկոմեդիան գտնվում էր Մարմարա ծովի հյուսիս-արեմուտք լայնարձակ երկրամասում, որը համապատասխանում է ժամանակակից Թուրքիայի Իդմիթ և Բուրսա նահանգներին:

1860—70-ական թվականներից հակապես սկսվում է Օրգու գավառակի և հարեան շրջանների համշենահայերի դաղթը դեպի Մարմարա ծովի այդ դեղանի ափերը՝ Նիկոմեդիա, Իզմիթ, Ասարաղար, Պարաիզակ (Պարիճեչուկ) և այլուր: Համշենցի առաջյաներին լափազանց դուր են գալիս անդի դիրքը, կլիման, բնախր ծառերի տեսակներով ծածկված անառնները: Տեղացի թուրք բնակչությունը խրախուսում է հայերին՝ ընտանիքներով տեղափոխվել և դառնալ հարեաններ:

Կարճ ժամանակաընթացքում Օրգուից բաղմաթիվ համշենահայեր դաղթում են նոր հնաստագրական վայրերը:

Նիկոմեդիա ասանամյակի ընթացքում Նիկոմեդիայում հիմնվել էին համշենահայերի հետեյալ գյուղերը.

Իզմիթի գավառի Ասարաղար գավառակում գտնվում էին մեկ հայանի հայաբնակ հետեյալ բնակավայրերը.

Արամ կամ Գրգրլուֆ գյուղ<sup>66</sup>: Առաջին համշենահայ գաղթիներից մեկը այս շրջանում, որը

<sup>65</sup> «Եշմիտիս» ամսագիր, 1966, № 6, էջ 59—60:

<sup>66</sup> Մ. Գասալյան (Ճարհատ), Հայերը Նիկոմեդիա գավառի մեջ, Պարաիզակ, 1912:

10 ժամ հյուսիս-արևելք ընկած գեղատեսիլ լեռնահովտում: Գյուղը երկու կողմից շրջապատված էր անտառածածկ լեռներով:

Գյուղը բաժանված էր երեք թաղի. Ֆելիսյուղ թաղում ապրում էր 43 տուն համընթաց: Հովաթի հարթին ու կողին ընկած վերին (կամ Արդումանցոց) և ժոմուն (եկեղեցու) թաղերը դանվում էին կես ժամվա ճանապարհ դեպի հարավ, բարձր լեռան լանջին: Տները կառուցված էին իրարից բավականին հեռավորության վրա: Գյուղի մոտակա հովտում բխում էր սառնորակ ջուր, որի միջոցով կարելի էր ջրադացներ աշխատեցնել:

Արամցիք դաղթել էին Օրդուի դավառակի Սալար, Խոջոլի, Փամպուբլու, Գայա-տիպի գյուղերից, 1873 թ. ձմռանը, ղեկտեմբերի 3-ին՝ 14 տնով: Սրանք եղան ճայ լագերու, այսինքն՝ համընթացների գաղթային հոսանքի առաջնակները, որոնք էմբքսոցոց, Սահակցոց, Արգումանցոց, Մինասցոց, Թերոցոց դերդաստաններից էին: Շրջակա անտառները առաս ու համեղ զոզալի (հոն) ծառերով հարուստ լինելու պատճառով գյուղն ստացել էր Գըղըճուք (թուրք.՝ հոն) անունը:

Հայ հոգևորականության խորհրդով դյուղն Արամ էր մկրավել 1876 թ.:

Տեղացիների վկայությամբ, 1914 թ. դյուղն ուներ շուրջ 65 առն՝ 469 բնակչությամբ, հետևյալ աղգառահներից՝ Խոչիկցի, Սահակցի, Զթցի, Կարդոնցի, Մինասցի, էմբքսոցի, Փափաղցի, Թերեղցի, Օհանցի, Բարդասարցի, Արդումոնցի, Քյոսեցի, Գարակավուրցի, Թորոսցի՝ բոլորն էլ Օրդուի շրջանից:

Հատկանշական է այն հանգամանքը, որ նիկոմեդիա սեզափոխված համընթացները բնակություն են հաստատում պետական հողամասերի վրա, որը ղերծ էր պահում նրանց կալվածատերերի կամայականություններից, մի հանգամանք, որ նրանց՝ այդ վայրերը դաղթելու գլխավոր շարժողիքներից մեկն էր:

Գյուղի հանդերը մեծ մասամբ սեահողային-րերքառատ էին ու հեշտ մշակելի: Անառները հարուստ էին պտղաատու և որպես շինանյութ ծառայող թանկարժեք ծառատեսակներով: Առատ միրգ էին տալիս զովալի (հոն), մաշմուրգի, գունամիջի (պառուլի պառուլ), դըզըրի (վայրի մաշմուրգ), ալունեհու, շոթթուրի (վայրի տանձ), վայրի կաղնու և ուղղաատու այլ ծառատեսակներ: Մշակովի մրգերից ամենատարածվածներն էին՝ տանձր, խնձորը, սալորը (հատկապես դեղնաշուրի տեսակը), բալն ու թուխ:

ապա դաշամաշակությունը (ցորեն, լավուտ, գարի, հաճար), անասնապահությունը, կտնամշակությունը, բանջարաբուծությունը, մեղվաբուծությունը և հավաբուծությունը:

Ինչպես Արամ, նույնպես և նիկոմեդիայի համընթաց բոլոր դյուղերում տարածված էր նաև շերամապահությունը: Շերամի բեջեկներ (կուկուլ-խոզակ՝ բոժոժ) վաճառքը առաջնակարգ տեղ էր դրավում: Շերամ վաճառում էին բեջեկ (բոժոժ) վիճակում՝ ձեռնարկատերերին: Մինչև 1900-ական թվականները հիմնական երկրագործական գործիքը եղել է պապենսկան միխոփանի արորը: Նրանից հետո մուտք է գործել ու արադ տարածվել մեկ ու երկխոփանի նորաձև գուլանը:

1900-ական թվականներին դյուղում կային երկու եկեղեցի ու երկու դպրոց, որոնք կառուցվել էին Ֆիլիսյուղ ու ժոմուն (եկեղեցու) թաղերում, գլխավոր ու շքեղ եկեղեցին ժոմուն թաղում էր գտնվում: Դպրոցներից առաջինը կառուցվել էր Ֆիլիսյուղ թաղում, գյուլի հիմնված ապրին՝ 1873 թ.: Ուսուցիչները ստանում էին տարեկան 15 ոսկի, որը դանձվում էր գյուղի բոլոր ընտանիքներից՝ ըստ տնտեսության կարողություն:

1915 թ. դյուղն ամբողջությամբ ենթարկվեց բռնադաղթի: Նդեռնից փրկվել ու հայրենի գյուղ է վերադարձել 21 հոգի:

Գեղամ կամ Կովուֆ-փելլիք գյուղ: Գտնվում է Աև ժովից 3 ժամ հարավ, Արամ դյուղից 3 ժամ արևելք, Գարա-սու հանքի մոտակայքում: Շրջապատված էր հունական, մահմեդական լաղերի, վրացիների և համընթացների բնակավայրերով: Հոգևորականության խորհրդով Գեղամ (Աևանա) լճի պատվին գյուղը Գեղամ անունով է մկրավել 1884 թ.: Գյուղն ուներ չորս թաղ. ամենամեծը Կովուֆ-փելլիք կամ բուն Գեղամ թաղն էր, որն ուներ 37 առն բնակչություն՝ բոլորն Օրդուից գաղթած համընթացային: Գյուղն ուներ շուրջ 112 տուն բնակչություն (1876 թ.):

Եկեղեցին հիմնադրվել է 1892 թ.: Մինչ այդ ունեին աղուցված (դերսնակապ) մատուռ:

Չոֆուր: Գյուղ Գեղամի հարավային կողմում՝ 16 տուն բնակչությամբ, որի երկու թաղերը անդրնդախոր ձորով բաժանված էին միմյանցից:


Թեվե: Գյուղ Գեղամի հյուսիսում, որտեղ ապրում էին (1902-ին) Օրդուի Ուլիբեկ գյուղախմբի Ֆյուզեր գյուղից դաղթած 30 տուն համընթացային:

Տեքե կամ Գարա-փելլիք: Գյուղը բաղկացած էր երկու թաղից, ուներ 29 տուն համընթացային բնակչություն՝ բոլորն Օրդուի շրջանից (1897 թ.):

# ՄԻԿՐՍԵՒՍԻ ԳԱՎԱՐԿ

Կրթական և կրոնական օջախներ (սխեմատիկ քարտեզ)

Հնդկական Բ.Գ.ԹՈՒՂԱՔՅԱՆ  
 Նուրիդրատա՝ Դ. Ս. ՎԱՐՐՈՒՍՅԱՆ  
 Քարտեղագիր՝ Հ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ



- Պ Ա Յ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Ե Ա Ն Ն ԵՐ**
- Բնակավայրեր
  - Գյուղ
  - ✝ Զարգացող եկեղեցի
  - ✝ Գաղթյալներն եկեղեցի
  - Գաղթյալներն արտոց թիվ սրբ. Կաթողիկոսական
  - Գյուղ
  - Գյուղական
  - Գյուղական



Միակշիւթյան դրողսունքներն ու երկրադոր-  
ծական դործիքները նույնն էին, ինչ որ Արամ  
դյուղում:

1915 թ. Լոնոնից վերադրել ու հայրենի  
դյուղն էին վերադարձել ընդամենը 25 սարգ:

Հովիվ-գեղ (Չոբան-յաթաղի): Գտնվում էր  
Ատաբաղար դավառակի հանդակ վիճակում, ա-  
տաջինից 4, երկրորդից 1,5 ժամ հյուսիս-արևելք:  
Գյուղում բնակվում էր 50 տուն համշենահայ  
հետևյալ ուղղատոհմերից՝ Բողղասարցիք, Ավե-  
ախսիք, Նահապետցիք, Քուրկարցիք, Քերզցիք,  
Քերբերցիք, Ավճցիք, Քյուսցիք:

Մ. Գասապյանի վկայութեամբ գյուղը հիմ-  
նրվել է 1874 թ. սուրբի 7-ին: Զբաղվում էին  
դյուղատնտեսական նույն ճյուղերով, ինչ որ Ա-  
րամ դյուղում:

Իյուղում կային փայտաշեն եկեղեցի ու դպրոց:

Խաչ-գեղ (Մեջլախի): Գտնվում է Իվմիթի ու  
Ատաբաղարի միջև, առաջինից 5, երկրորդից 4  
ժամ հեռավորության վրա, Արմաշից շուրջ մեկ  
ժամ հյուսիս-արևելք: Գյուղը բաղկացած էր երեք  
թաղից. երկուսում բնակվում էին թուրքեր, երրոր-  
դում՝ 40 տուն համշենահայեր, որը և կոչվում էր  
Խաչ-դեղ (հետևյալ ուղղատոհմերից՝ Արղուման-  
ցի, Խաչերցի, Խաչիկցի, Մինասցի, Ճանսուղցի,  
Չատիկցի, Քերզցի, Չաբրցի, Վարդուցի, Նահա-  
պետցի, Յամաքցի, Գարսամցի): Խաչդուղացիք  
այստեղ էին դաղթել Օրդուի շրջանի Գուշ-ջերեն և  
Գրամա դյուղերից:

Գյուղում կային դպրոց ու եկեղեցի:

Նորոհիվ թուրք հարևանների, Խաչ-դյուղի  
հայերը մեծ եղեռնին ընդհանուր բռնադաղթի  
չենթարկվեցին: Այնուամենայնիվ, աքսորի պա-  
տրովակով դյուղից հուսարին ու սպանեցին 74  
տղամարդ: Կանանց ու երեխաներին համադյու-  
ղացի թուրքերը թաքցրին իրենց տներում: Այս-  
պիսով դյուղի 264 շունչ բնակչությունից 190 անձ  
փրկվեց:

Հայոց-գեղ կամ Սըք-գեղ: Գտնվում է Ատա-  
բաղարից 6 ժամ հարավ, հանդակ վիճակի դե-  
ղատեսիլ հովտում: Գյուղն ուներ երեք թաղ՝ Թե-  
փե-գյուղ, Օրթա-գյուղ և Վերի-գյուղ: Այստեղ  
բնակվում էր Օրդուից դաղթած 250 տնից ավելի  
համշենահայ՝ Թարաքցի, Բողղասարցի, Մինաս-  
ցի, Արղումանցի, Մելոնցի, Վարդուցի, Տուրքա-  
րցի, Ավետիսցի, Խաչատուրցի, Չաբրցի, Ավճցի,  
Կրպաշցի, Խերենցի, էմբսուլցի ազատոհմե-  
րից:

Առաջնակարգ զբաղմունքներն էին ծխախո-

Ջբաղվում էին նաև անասնապահութեամբ ու  
կաթնամշակութեամբ: Ամռանը անասունները տե-  
ղափոխում էին 12 ժամ հեռավորության վրա  
դտնվող Կարտուկի արոտավայրերը (յայլաները):  
Մշակում էին կաղին, կեռաս, բալ, խնձոր,  
Օրդուի շրջանից բերած ծվաղի անկիներ:

Գյուղն ուներ քարակերտ շքեղ եկեղեցի:  
Ունեին 6-ասյա երկսեռ դպրոց:

Վարալիզակ (Բալաչեճուկ) գավառակ: Պար-  
տիզակը գտնվում է Իվմիթից երկու ժամվա ճա-  
նապարհ արևմուտք, ծովի հանդիպակաց ափին:

Մանուշակ (Մենեվլե): Անխառն համշենահայ  
այս դյուղը գտնվում է Պարտիզուկից 3 ժամ հա-  
րավ-արևմուտք:

Հիմնվել է 1892 թ. Նախահեղեռնյան տարի-  
ներին դյուղն ուներ 123 տուն, 898 անձ բնակ-  
չություն: Գյուղը բաղկացած էր 4 թաղից՝ Վերի-  
թաղ, Վարի-թաղ, Աուբաթում և Ալմա-սուլ Վե-  
րի և Վարի-թաղերում ապրում էին Հեյնիցի,  
Ղարիբցի, Չիթյանցի, Շաղլումցի, Չատիկցի, Կա-  
լինցի, Հակոբցի և Քեչիշցի, Մինասցի, Ավետիս-  
ցի, Տերթլցի, Աղալցի, Աթոսցի դերձաստան-  
ներից, ընդամենը 66 տուն՝ 513 անձ:

Աուբաթում թաղն ուներ 28 տուն՝ 196 բը-  
նակչությամբ (Խորոզցի, Թախթաշցի, Զանսուղ-  
ցի, Ղոնդըլցի, Շաղլումիշցի, Ավճցի, Մարդարցի,  
Չատիկցի դերձաստաններից):

Ալմա-սուլ թաղն ուներ 29 տուն՝ 189 բնակչու-  
թյամբ (Խորոզցի, Գաբաբյանի, Ճափախեցի,  
Կալինցի, Զատիկցի, Ղանդիլցի, Արղումանցի  
դերձաստաններից):

Գյուղատնտեսական զբաղմունքները նույնն  
էին, ինչ Արամ դյուղում:

Մանուշակ գյուղում կար երկու երկսեռ դըպ-  
րոց, մեկը Վերի թաղում՝ վեցամյա դասընթացով,  
երկրորդը՝ Ալմա-սուլ թաղում՝ 4-ամյա դասըն-  
թացով:

Գյուղն ուներ փայտակերտ, շքեղ եկեղեցի:

Մանուշակ դյուղի հայ բնակչությունը բըռ-  
նադաղթի ենթարկվեց շրջակա հայ գյուղերի հետ  
միաժամանակ՝ 1915 թ. հունիսին: Բեռների և  
մարդկանց փոխադրության համար իրավունք էր  
տրվում վերցնել բեռնակիր անասուններ և սայ-  
լու: Կարավանը երկու օրում հասնում է էսկիշե-  
հիր: Այնանից բեռնատար դնացքով անցնում են  
Աֆիոն-Գարահիսար և հանդրվանում Գոնիայում:  
Այնանը կուտակվում են անթիվ տքորյալներ:  
Գոնիայի հայապաշտպան վալին, ամեն կերպ  
աջակցում է հայ դաղթականներին, հնարավո-  
րության սահմաններում բնակարան, պարեն

մխելիությունը, բոշկապատ ծածուկությունը, Երվանդի  
կարճ ժամանակ անց նրան պաշտոնագրուրկ են ա-  
նում: Գոնիայում սկսվում է այլ վայրերից այստեղ  
քշված ու աեղական հայերի վայրագ բռնազաղթն  
ու կոտորածը, որին մեծ շահով նպաստում է վրա  
հասած ռուս ժողովի համաճարակը: Այս մղձա-  
վանջից փրկված ընդամենը մի քանի ընտանիքի  
1918 թ. թուլլաարվում է վերադառնալ հայրենի  
Մանուշակ գյուղը:



13. Բանասաց Իսրայել Հակոբի Մինասյան (Պարտիզակի գա-  
վառակի Ջաքար գյուղից):

Ժոմուն-գեղ (Քիլիսե-այուզի): Այս գյուղը  
հայտնի էր նաև ժամավայր կամ Քիլիսե-յերի  
անվամբ: Գյուղը գտնվում է Պարտիզակից 7, Մա-  
նուշակից 4 ժամ հյուսիս-արևելք: Ուներ 50 տուն,  
352 շունչ համշենահայ ընկալություն, որոնք  
գալթել էին Օրգուից (Վարդոնցիք, Մեղրոնցիք,  
Մինասցիք, Խաչիկցիք, Ջախիկցիք, Ճանսուզցիք,  
Գալենցցիք, Աստցիք, Ոսացիք, Կոնդակցցիք, Չթըլ-  
ցիք, Գարագյուզցիք, Մակարցիք, Քեշիշցիք և Զե-  
պեցիք):

Այստեղ էլ հիմնականում ղրաղվում էին  
պյուղատնտեսական այն ճյուղերով, ինչ որ Արամ  
գյուղում: Առանձնապես զարգացած էր շերամա-

Գյուղը շոգ գաշտավայրում գտնվելու պատ-  
ճառով ամառվա ամիսներին անասուններին աա-  
նում էին լեռները: Տարածված զբաղմունք էր նաև  
ծխախոտագործությունը: Կանեփ մշտկում էին  
սեփական կարիքները հոգալու համար:

Գյուղն ուներ բարեկարգ 6-ամյա դպրոց ու  
եկեղեցի:

Նղեռնի օրերին ժոմուն-գեղի հայերը ևս ան-  
ցան նույն առապալի ճանապարհներով, որով՝  
Մանուշակի ընակիչները: 362 շունչ ընակչություն-  
նից, 1918 թ. գյուղ վերադարձան միայն 31 անձ:

Ջաքար-գեղ (Տյուշամա): Գտնվում է Պար-  
տիզակից մեկ ժամ հարավ-արևմուտք, քաղաքա-  
մերձ արվարձաններում: Տյուշաման որպես Ջա-  
քար-գյուղ վերակոչվել էր հոգևորականության  
խորհրդով, որը հիմնել էին Օրգուից գալթած  
համշենահայերը 1870-ական թթ.: Այս ան-  
խառն հայաբնակ գյուղն ուներ 120 տուն ընակ-  
չություն՝ Մինասցի, Գրրաշցի, Արվսմոնցի, Չրթ-  
ցի, Մեղրոնցի, Մարտիրոսցի և այլ գերդաստան-  
ներից: Առաջնակարգ ու շահութաբեր ղրագմուն-  
քն էր ծխախոտագործությունը: Հացահատիկ-  
ներից առաջին տեղը զբաղում էր եգիպտացորենը  
(լազուար): Ցանում էին նաև ցորեն, գարի, հա-  
ճար: Բանջարաբուծությամբ ու անասնապահու-  
թյամբ հիմնականում հոգում էին ընտանիքի պա-  
հանջները:

Լայնորեն տարածված էր շերամապահու-  
թյունը, որը նույնպես գլխավոր զբաղմունքներից  
մեկն էր:

Գյուղն ուներ բարեկարգ 6-ամյա դպրոց ու  
եկեղեցի:

Գյուղի ընակչությունը բունգաղթի ենթարկ-  
վեց շրջանի հայկական այլ գյուղերի հետ միա-  
ժամանակ՝ 1915 թ. հունիս ամսին: Նղեռնից  
փրկվել և հայրենի գյուղն են վերադարձել ընդա-  
մենը 38 շունչ, որոնք ապատվել էին համաճա-  
րակի պատրվակով, Գոնիայի աքսորյալների  
խմրի հետ:

Սաք: Պարտիզակից կես ժամ արևելք՝ Տեյ-  
կել հայաբնակ գյուղից վերև, հրաշալի աեսարա-  
նով ու առողջարար կլիմայով գյուղ, Աուրբ կոչ-  
վող ուխտաաեղիի մոտ, որից էլ սաացել էր անու-  
նը: Ուներ 30 տուն համշենահայ ընակչություն,  
որի մեծ մասը գաղթել էր Մանուշակ ղյուղից,  
1904-ին:

Տաղլուխ: Պարտիզակի արևմտյան կողմում  
իոքըր բնակավայր, ուր բնակվում էր Մանուշակից  
փոխադրված 7—8 ընտանիք: